ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2015 թվականի N 5 – Ն

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ286 որոշմամբ հաստատված՝ Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու մասին կարգի 15-րդ կետի «ա» ենթակետի և 32-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի ղեկավար Աշոտ Թարվերդյանի և քաղաքացիներ Շողոկաթ Գյորգյանի, Գագիկ Գրիգորյանի. Գագիկ Չրաղյանի, Արմինե Բաղրամյանի,Արփինե Չրաղյանի, Սերոբ Չրաղյանի, Սմբաթ Հարությունյանի առաջարկությունները, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-ծրագի 1-ի շրջանակներում Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ24+147.5 տրանսպորտային ուղեանցի կառուցմանն աջակցելու նպատակով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Համաձայնություն տալ Շողոկաթ Գյորգյանի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքում գտնվող, 133-001 կադաստրային ծածկագրով 1110քմ գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ, գյուղատնտեսական գործունեություն գործառնական նշանակության հողամասից պահանջվող անհրաժեշտ մասը (այսուհետ՝ Փոխանակվող հողամաս) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն նպատակային նշանակության և նույն գործառնական նշանակության (համարժեք որակական հատկանիշներով) նույն չափի հողամասի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելու մասին Շողոկաթ Գյորգյանի առաջարկությանը:
2. Համաձայնություն տալ Գագիկ Գրիգորյանի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքում գտնվող, 134-001

կադաստրային ծածկագրով 5660քմ գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ, գյուղատնտեսական գործունեություն գործառնական նշանակության հողամասից պահանջվող անհրաժեշտ մասը (այսուհետ՝ Փոխանակվող հողամաս) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն նպատակային նշանակության և նույն գործառնական նշանակության (համարժեք որակական հատկանիշներով) նույն չափի հողամասի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելու մասին Գագիկ Գրիգորյանի առաջարկությանը:

3. Համաձայնություն տալ Գագիկ Չրաղյանի, Արմինե Բաղրամյանի, Արփինե Չրաղյանի,Սերոբ Չրաղյանի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքում գտնվող, 135-001 կադաստրային ծածկագրով 3670քմ գյուղատնտեսական նպատակային նշանակության, գյուղատնտեսական գործունեություն գործառնական նշանակության հողամասից պահանջվող անհրաժեշտ մասը (այսուհետ՝ Փոխանակվող հողամաս) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն նպատակային նշանակության և նույն գործառնական նշանակության (համարժեք որակական հատկանիշներով) նույն չափի հողամասի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելու մասին Գագիկ Չրաղյանի, Արմինե Բաղրամյանի, Արփինե Չրաղյանի, Սերոբ Չրաղյանի առաջարկությանը:
4. Համաձայնություն տալ Սմբաթ Հարությունյանի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքում գտնվող, 03-027-136-002 կադաստրային ծածկագրով 2.0հա գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ, գյուղատնտեսական գործունեություն գործառնական նշանակության հողամասից պահանջվող անհրաժեշտ մասը (այսուհետ՝ Փոխանակվող հողամաս) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն նպատակային նշանակության և նույն գործառնական նշանակության (համարժեք որակական հատկանիշներով) նույն չափի հողամասի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելու մասին Սմբաթ Հարությունյանի առաջարկությանը:
5. Համաձայնություն տալ Սմբաթ Հարությունյանի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքում գտնվող,
   051-001 կադաստրային ծածկագրով 1000քմ
   051-002 կադաստրային ծածկագրով 1000քմ
   051-003 կադաստրային ծածկագրով 1000քմ
   051-004 կադաստրային ծածկագրով 1000քմ
   բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից պահանջվող անհրաժեշտ մասը (այսուհետ՝ Փոխանակվող հողամաս) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն նպատակային նշանակության և նույն գործառնական նշանակության

(համարժեք որակական հատկանիշներով) նույն չափի հողամասերի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելու մասին Սմբաթ Հարությունյանի առաջարկությանը:

6. Փոխանակվող հողամասերը, վերջիններիս նկատմամբ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուց հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-ծրագի 1-ի շրջանակներում Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ24+147.5 տրանսպորտային ուղեանցի կառուցման նպատակով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք*
*հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2015 թվականի N 6-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 3 կետի դրույթներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ Բուրաստան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, մշակույթի տան շենքին հարակից տարածքում գտնվող հասարակական գործառնական նշանակության հողամասից մանկական խաղահրապարակ կառուցելու մասին՝ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2015 թվականի N 7– Ա

## ԼԵԳՈ ՍԱՐԻԲԵԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 2 ) կետի դրույթներով և հիմք ընդունելով հողերի չափագրման, փողոցների, շինությունների բարեկարգման, վերանորոգման անհրաժեշտության և դրանցում եղած թերությունները բացահայտող ու վերհանող հանձնաժողովի կողմից 10.05.2015թ. կազմված արձանագրությունը՝ համայնքի բնակիչ Լեգո Սարիբեկի Մխիթարյանի բնակելի տան իրական վիճակի մասին, ինչպես նաև հաշվի առնելով Լեգո Սարիբեկի Մխիթարյանի դիմումը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Լեգո Սարիբեկի Մխիթարյանի ընտանիքը ճանաչել բնակարանի կարիքավոր:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ